Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L114
692

2009
600




ՅԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ
Յայ. Թումանեան
ԱՆՈՒՇ
Հրատ.
Ստ. Էսպիրեանի
եւ Շակ.
2.

ՀԱՅ-ԱԶԳ ՄԵՐ

Լաչ
692
600.

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ.

ԱՆՈՒՇ

ԼՈՌԻՈՅ ՃԵՄԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ.
Ա.ՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՈՑ

Հրատարակութիւն
ՍՏ. ԼԻՍԻՑԻԱՆՑ
ԵՒ ԸՆԿ.

798
Հայ Գրականության Թանգարան
Ս. Սամսոնի անվան
Հ. Մ. Ա. ՄԱՍԻՍԵԱՆ
СЕМЕЙНЫЙ ФОНД

ԹԻՖԼԻՍ 1904 թ.
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Միք. փոխց. № 81

Дозволено Цензурою. Тифлисъ, 4-го марта 1904 г.

(365-84-62)

692-2009

№690

ԱՆՈՒՇ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

(Համբարձման դիշերը)

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թռչելով՝
Փերիները սարի գլխին
Հաւաքւեցին գիշերով։

«Եկէք, քոյրեր, սէգ սարերի
Զբնաղազեղ ոգիներ,
Եկէք, ջահել սիրահարի
Սէրը ողբանք վաղամեռ։

Օխտն աղբիւրից ջուր է առել
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ։

Ջուրն ու ծաղիկ աստղունք դրել,
Խընդիրք արել աստղերին,

Փափագ սըրտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սէրին...

Ափսոս, Անուշ, սարի ծաղիկ,
Ափսոս իգիթ քու եարին,
Ափսոս բոյիդ թելիկ-ժելիկ,
Ափսոս էդ ծով աչքերին...

Ու նրանց հետ ցօղ-արցունքով
Լըցած սըրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տըխուր սիւգով
Հառաչեցին էն գիշեր։

«Վուշ-վուշ, Անուշ, վուշ-վուշ, քուրիկ,
Վուշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վուշ, Սարօ, վուշ-վուշ իգիթ,
Վուշ քու սիրած սարերին...

Եկէք, բոյրեր, սէգ սարերի
Զըքնաղազեղ ոգիներ...»
Ու փէրիներն այսպէս տըխուր
Երգում էին ողջ գիշեր։

Կանչում էին հըրաշալի
Հնչիւններով դիւթական,
Ու հէնց շողաց ցոլքն արևի՝
Անտես, անհետ չըքացան։

Թոր սուզեցին ակն աղբիւրի,
Մըտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վըտակների
Ալիքները պաղպաջուն։

ԱՒԱՆԻՆ ԵՐԳ

I

Կանչում է կըրկին, կանչում անդադար
Այն չըքնաղ երկրի կարօտը անքուն,
Ու՝ թևերն ահա փըռած տիրաբար՝
Թըռչում է հողիս, թըռչում դէպի տուն։
Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղուց կարօտով սպասում են ինձ,
Ու ձըմրան երկար գիշերը նըստած՝
Խօսում են Լօռու հին-հին քաջերից։
Դէպ այն սարերը, որ վէս, վիթխարի,
Հարրած շարքերով բըռնած շուրջպարի,
Հըսկայ շուրջպարի բըռնած երկընքում,
Հըրճւում են, ասես այն մեծ հարսանքում
Գերճ Արագածի նաղելի դըստեր,
Որ Դև-Ալ, Դև-Բէթ և այլ հըսկաներ,
Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ Լօռի։ *)

---

*) Առասպելն ասում է թէ՝ Դև-Ալը (Դեալ սարը), Դև-Բէթը (Դերեզ գետը) և ուրիշ դևեր՝ յափըշտակել են Արագածի աղջիկը, բերել են Լօռի։

II

Է՛յ հին ծանօթներ, է՛յ կանանչ սարեր,
Ահա ձեզ տեսայ ու միտքս ընկան,
Առաջքս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դէմքեր, որ հիմի չկան։
Անցե՛լ են, ոնց որ ծաղկունքը պէս-պէս,
Որ անցած գարնան կայլին ձեր լանջում,
Անցե՛լ ձեր գլխի հէրևան ձիւնի պէս,
Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում։
Ողջո՛յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թըռչուն կարօտով փընտրում ձոր ու լեռ,
Դիւթական ձայնով կանչում է հանդէս։
Դո՛ւրս եկէք կըրկին շիրմից, խաւարից,
Դո՛ւրս եկէք տեսնեմ, շօշափեմ, լըսեմ,
Կեանքով շընչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից,
Լըցրէ՛ք պօէտի հաճոյքը վըսեմ...

III

Եւ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թաւուտ ծըմակի լըռին խորքերից
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանգն ահա լըսում եմ նորից։
Թընդում է զըւարթ աղմուկը ըրնի,
Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից,
Ու բոլորն ահա նորից կենդանի
Եկնում են աշխոյժ վաղորդեան ժուրթից,
Ու թարմ, ցօղապատ լեռների լանջում...
Սուս... ականջ արա,—հովիւն է կանչում...

IV

—Աղջի՛կ, անասունած, նըստիր վըրանում,
Ի՞նչ ես դուրս գալի, խելքամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանդըստանում,
Խաղեր կապելով,
Զօլեր չափելով,
Ոչխարքս անտէր,
Ընկել եմ հանդեր։

Ամա՛ն, էրեցիր սիրտս քո սիրով,
Ոտքս կապեցիր թել-թել մազերով,
Էլ չեմ դիմանալ կըփախցնեմ զօրով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ
Թուխամազ Անուշ։

Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չըտան,
Արին կըթափեմ ես գետի նըման,
Սարերը կընկնեմ կորչեմ անգիտան,
Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերըդ կամար
Աղջիկ քեզ համար։

Երգում է Սարօն ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նըստել վըրանում.
—Էն ո՞վ էր նանի, որ կանչում էր մեզ,
Դու չես իմանում. ականջ դիր, տես...
—Հերիք է, Անուշ, ներս արի դազէն, [1])
Քանի դուրս թըռչես, նայես դէս ու դէն,
Տեսնողն էլ կասի—ի՞նչ աղջիկ է սա,
Հաղար մարդի մօտ կերթայ կըխօսայ։
—Մըտիկ տուր, նանի, էն սարի լանջին,
Ի՞նչքան աւլուկ է տալի կանանչին.
Նանի, թող գընամ քաղեմ ու հիւսեմ,
Էն սարի լանջին «Ջան գիւլում» ասեմ։
—Հանգիստ կաց, Անուշ, դու հասած աղջիկ՝
Ի՞նչ ունիս ջահել չորանների մօտ,
Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, աղջի, ամօթ է, ամօթ։
—Ա՜խ, սիրտս, նանի, չը գիտեմ ընչի՝
Մին լաց է լինում սեակնած, տըխուր,
Մին թև է առնում, ուզում է թըռչի,
Չըգիտեմ՝ թէ ուր, չըգիտեմ՝ թէ ուր...
Նանի ջան, նանի, ես ի՞նչպէս անեմ,
Ի՞նչ անի անքուն անհանգիստ բալէդ... [2])
Նանի ջան, նանի, կուժը թող առնեմ,
Աղբիւրը գընամ աղջիկների հետ...»

[1]) վրան։ [2]) զաւակդ։

Կըժերն ուսած՝ թըրւըռալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Երգը զընգում սարն ի վեր։

—Ամպի տակից ջուր է գալի,
Դօշ է [1]) տալի, փըրփըրում.
Էն ո՞ւմ եարն է նըստած լալի
Հօնգուր-հօնգուր [2]) էն սարում։

Ա՛յ պաղ ջըրեր, զուլալ [3]) ջըրեր,
Որ գալիս էք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,
Եարս էլ խըմի՞ց էդ ջըրից։

Եարաբ խըմի՞ց, եարաբ հովցու՞
Վառուած սիրտը էն եարի,
Եարաբ հովցու՞, եարաբ անցու՞
Անքուն ցաւը ջիգեարի...

—Աղջի՛, քու եարն եկաւ անցաւ,
Վառուած, տարուած քու սիրով,
Էրուած ջիգեարն՝ եկաւ անցաւ,
Զըհովացաւ պաղ ջըրով...

[1]) Կուրծք, [2]) հեկեկալով, [3]) ցնիս։

Ամպի տակից ջուր է գալի,
Դօշ է տալի, փըրփըրում.
Մ՞խ իմ ազիզ եարն է լալի
Հանգուր-հանգուր էն սարում։

VII

Ու պառաւ նանի սըրտի մէջ յանկարծ
Ջայն տըւաւ թաքուն մի խաւար կասկած.
—Էն Երբ էր՝ Անուշն իր կուժը առաւ,
Աղբիւրը գընաց ու ետ չըդառաւ...
Ամպերն եկել են սարերը պատել,
Ջորերը լըցուել, իրար փաթաթուել,
Հազար չար ու շառ, հազար հարամի, [1])
Հազար ջահիլներ վըխտում են հիմի..
Ու ելաւ տեղից պառաւը յանկարծ՝
—Ո՞ւր կորաւ, Անո՜ւշ, ա՛յ մազըդ կտրած...
Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անահ զաւակին.
—Աղջի՜, սեւասի՜րտ, քու ահը կըտրի,
Աղջիկը մենակ ձո՞րը կըմընի՞.
Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,
Ի՞նչ ես կորցըրել՝ չես կարում գըտնել.
Աղջի, հէյ Անուշ, ա՛յ աղջի՜, Անո՜ւշ...
Ծընկանը զարկում, հառաչում է «վա՜ւշ»
Ու ձորի գըլխին մոլորւած կանգնած
Նայում է ներքև սիրտը սեակնած։
Ամպերն եկել են սարերը պատել,

[1]) Աւազակ։

Ջորերը լըցուել, իրար փաթաթուել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահիլներ վըխտում են հիմի։

VIII

—Թող, կանչում են ինձ... ա՛յրս կիմանայ...
—Ջէ՛, Անո՛ւշ, քի՛չ էլ, մի՛ քիչ էլ, մընա...
—Ջէ՛, թող ես գընամ... ա՜խ, ի՞նչ խենթ եմ ես.
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պէս,
Հէնց ես եմ մենակ լալիս ու տանջւում,
Դու սարի լանջին խաղեր ես կանչում։
Վաղո՜ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ես Երբ եմ եկել էստեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընո՜ւմ, անիրա՛ւ,
Էնքան մընացի՝ աչքըս ջուր դառաւ։
Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պէս,
Մընում էր եարին,
Ու չեկաւ նա տես։
Խեղճը դողալով՝
Անյոյս կըռացաւ,
Դարդից չորացաւ,
Ուռենի դարձաւ։
Ջըրերի վըրա
Գըլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին

Մի միտք է անում,
Թէ եարը եարին
Ո՞նց է մոռանում...

—Ա՜խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չի՞ս լսում.
Էն՝ որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խօսում.
Էն՝ որ գիշերով շընու [1]) եմ փընչում,
Էն ո՞ւմ եմ կանչում.
Էն, որ մոլորւած նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում.
Էն, որ հառաչում ու սիր եմ քաշում,
Էն ո՞ւմ եմ յիշում...
Ա՜խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անասունա՛ծ Անուշ...
Արբեցա՛ծ, անուժ,
Հառաչեց հովիւն ու սըրտին ընկաւ,
Հալւեցաւ, հանգաւ...

IX

—Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի.
Կանչում է մայրը, հառաչում, կանչում։
—Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ նանի՛,
Ձորից աղջկայ ձայնն է զօղանջում։
Ու մաղերն անկարգ տըւած թիկունքով
Ու ցըրւած շիկնած այտերի վրան,
Դուրս եկաւ թեթև ամպերի տակից

[1]) Սրինգ

Անուշը՝ փախած եղնիկի նըման։
Նա կուժը դատարկ ետ բերաւ կըրկին,
Իսկ ուսին տարած ուսաշոր չըկայ,
Թողել է այն էլ ջըրի եզերքին.
Ա՜խ, անհոգութիւն ջահիլ աղջկայ։
—Նանի՛, վախեցայ, գանգատւում է նա,
Եւ ուզում է լալ, չի կարողանում.
Նանի՛, ներքևում ես մարդիկ տեսայ,
Կարծեցի՝ թուրքեր էին լողանում...
Անիծում է ծեր մայրը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անէծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին։

ԵՐԿՐՈՐԴ ԵԲԳ

X

(Համբարձման առաւօտը)

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով,
Փունջ-փունջ աղջիկներ սարերը գլան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով.

«Համբարձում, եայլա,
Եայլա Ջան, եայլա,
Սև սարեր, եայլա,
Եայլա Ջան, եայլա:

Երգ ու բոյր խառնած,
Թև-թևի բռնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում
Ինչպէս թիթեռներ:

Համբարձում, եայլա,
Եայլա Ջան, եայլա,
Լաւ օրեր, եայլա,
Եայլա Ջան, եայլա:

Եկաւ համբարձում
Ծաղկով զարդարուած,
Մեր բախտին հարցում.
—Ո՞վ է մեզ գրբուած:
Ա՛յ Ջան տղայ, Հրան տղայ, ու�են դու:
Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Դէ հանիր, աղջի,
Վիճակն 'ի բարին,
Երգերով գովենք
Էն իգիթ եարին:
Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն եարի,
Ի՞նչ գարդ ունիմ քանի նա կայ աշխարհի:

Համբարձում, եայլա,
Եայլա Ջան, եայլա,
Հուր սըրտեր, եայլա,
Եայլա Ջան, եայլա:

Թընդում են երգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մէկին իր երազն ու սէր,
Միւսի մուրազը սըրտումն է մընում:

XI

Պըտոյտ է տալիս վիճակը նորից
Քուշուշքը [1]) գըլխին ծաղիկ ծաղկաձէր,
Թընդում «Ջան գիւլում» մատաղ սըրտերից,

[1]) քօղ, շղարշ.

Հետը գըգըլում էն ծաղկոտ սարեր։
«Ա՛յ թուխ մազաւոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգեարին գիւլա դիպչի
Քեզ սիրի ով որ աղջիկ։

Ո՜հ, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկաւ,
Սևաթախտ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...
Ու ողջ մընացին մոլորուած, ապուշ։

—Սուտ բան է, քոյրիկ, դու մի հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտդ մի կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գիւլում ասա։
—Ա՜խ, չէ, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ.
Ես երբէք երբէք, բախտ չեմ ունեցել.
Ես միշտ էլ էսպէս անբախտ կըլինեմ.
Մանուկ օրից են դեռ ինձ անիծել։
Ասում են՝ մի օր, ես օրօրոցում՝
Մի պառաւ դաւրիշ մեր դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
Իմ նանը նըրան բաժին չի տալի։
—Կորի՛, ասում է, կորի՛ մեր դըռնից,
Երեխաս ճաքեց, հեռացի՛ր, գընա...»
Ու դաւրիշն այնտեղ անիծում է ինձ,
Թէ՝ դըրա օրը լացով անց կենայ...
Ա՜խ, այն դաւրիշի անէծքին անզութ
Ու այս վիճակին տեղեակ է Աստուած,

Սիրտս էլ միշտ փակ, սիրտս էլ միշտ մռութ,
Ի՜նչ կայ, չըգիտեմ, իմ առջև պահուած...
—Մի տըրտմիր, Անուշ, մի լինիր յամառ,
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դաւրիշ, մի անէծք յիմար,
Ու լալիս ես դու այդպէս սըրտաճաք...
Հանգի՛ստ կաց, քոյրիկ, մի վախիր այդքան,
Կեանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Այդ քո նորահաս մատաղ կուսութեան
Առաջև դեռ կան երջանիկ օրեր։
Սուտ բան է, քոյրիկ, դու մի հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գիւլում ասա։

(Խումբը երգում է)

Աղջի բախտաւոր,
Երնէկ քու սէրին,
Քու սարի սովոր
Սև-սև աչքերին.

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Սէր-օրեր, եայլա,
Եայլա ջան, եայլա։

Մեռնեմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,

692. 2009 (365784-62)

Սարի պէս մէջքիդ
Կանգնած եար ունեմ։

Համբարձում, եայլա,
Եայլա Ջան, եայլա,
Սար-եարեր, եայլա
Եայլա Ջան, եայլա։

ԵՐԲՈՐԴ ԵՐԳ

XII

Զմրան մի գիշեր կար մի հարսանիք,
Հրճվում էր անզուսպ ամբոխը գիւղի.
Գիւղն էին իջել հովիւ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի։
Ու պարից յետոյ լայն հրապարակ
Բաց արին մէջ տեղն արձակ գլխատան,
Զուռնաչին փչեց կոխի եղանակ,
Ահել ու Ջահել իրարով անցան։
Հարց են տալի—«քաշե՞ հա, քաշե՞...»
Ու դուրս քաշեցին զօռով երկուսին.
Մինը մեր Սարօն, իսկ միւսն Անուշի
Անդրանիկ եղբայր գառնարած Մօսին։
Ողջ գիւղը կանգնեց պարբսպի նման,
Ջոկուեց, բաժանուեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
Կանգնեց թիկունքին տղերանց մէկի։
Գոռում են, գոչում երկու բանակից.
—Սրտապինդ կացէք, մի վախէք, տղերք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք։
Ու տաքանում են տղերքը սաստիկ,

Փէշերը հաւաք խըրում են գոտին,
Գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին...
Ադաթ կայ սակայն էն մութ ձորերում,
Ու միշտ հընազանդ հընոց ադաթին,
Սմբոխի առաջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին։
Ու իրար բռնած Սարօն ու Մօսին
Գաշում են, ընկնում խոզապարկուկի [1]).
Ընկնում են գետին, եղնում միասին,
Դըժւար է իրրև յաղթել մէկ մէկի։
Իզուր է գոռում ամբոխը հարբած,
Զուր սըրատարբոպ նայում աղջիկներ,
Եւ զուր է Անուշն, իր շունչը կըտրած,
Սառել ու կանգնել ինչպէս մի պատկեր։
Անուշը կանգնած... Սարօն նըկատեց,
Թունդ առաւ սիրտը ու զարկեց արագ.
Աչքերի առջև մըլարը պատեց,
Մոռացաւ ընկեր, ադաթ ու աշխարք։
Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
Կատակի տալով թոդած էր իրեն,
Ուժ արաւ Սարօն, ծընկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրէն։
Ամբոխը թափուեց հարա հըրոցով,
Վեր թըռցրեց ջահել փահլեւաններին,
Եւ՝ ուրախութեան աղմուկ-գոռոցով
Յաղթողին փեսի թախտի մօտ բերին։

[1]) Միասին, կողք կողքի ընկնել։

Ցընծութեան ձայնից, ծափերի զարկից
Շարժւում են դողում պատեր ու օճրք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք։

XIII

Վերկացաւ Մօսին. իրեն կըտրատում,
—Թող գայ, գոռում է, որ բըռնենք նորից,
Թէ չէ նամարդը, արեւ եմ երդւում,
Էլ չի պըրծնելու երբէք իմ ձեռից,
Վէր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...
Մէյդան բաց արէք, թող մին էլ մէջ գայ...»
Ու ամէն կողմից ուրախ հըրհըռում,
Թունդալի ծաղրով կանչում են, գոռում.

— Զէլաւ, էդ չէլաւ,
Վէր չի գըցել գետ,
Մօսին թօլ էլաւ [1])—
Խոզապարկուկ էր...
Հա, հա, հա, տըղերք,
Շատ էլ լաւ կանի,
Մէջքը թափ տըւէք,
Թող մին էլ բըռնի.
Հա, հա, հա, տըղերք,
Մէջքը թափ տըւէք...

[1]) Շուտ եկաւ, գլորւից.

XIV

Եւ աղմկալի հարսանքի տանից
Դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
Արիւն է կաթում սեակնած սրրտից,
Գընում է ըշտապ, քայլերը մոլոր։
—Ամօթ քեզ, Մօսի, թուք ու նախատինք,
Ամօթ քեզ նրման գոված իգիթին,
Մի անունդ յիշիր, մի բոյիդ մըտիկ.
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին։
Ի՞նչպէս վէր ընկար դո՛ւ սարի նըման,
Երբոր նայում էր ողջ գիւղը կազնած...։
Դո՛ւ... կուճ գաս տակին Սարօի ծընկան,
Ներանից յետոյ երևաս կանանց...
Եկած էր էս բանն իսկի քու գլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դէ մեռիր էլի, գետինը մըտիր,
Տանը վեր ընկիր՝ իլիկ պըտըտիր»...

XV

—Վա՜յ, վա՜յ, Մօսի Ջան, ինձ մի՛ սպանիր.
Սըրանից յետոյ չեմ սիրիլ նըրան...
Վախենում եմ ես... դամէդ [1]) տեղը դիր...
Սիրտըս դողում է տերևի նըման...»
Խընդրում էր լալով եղբօր առաջին

[1]) Դաշոյն.

Անզօր ու դալուկ իր քոյրը չոքած,
Մօսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝
Ուզում էր մորթել նըրան աչքը բաց։
—Դէ իմ անունով երդւիր, անըզգամ,
Որ էլ Սարօին դու չես սիրելու,
Թէ չէ՛ տեսնում ես խանչալը հանած՝
Մինչև դաստակը սիրտդ եմ խըրելու։
—Քու ոտի հողն եմ, Մօսի Ջան, Մօսի,
Դու քու եսիրին [2]) երդում ես տալիս...
Ես էլ Սարօին չեմ սիրում՝ ասի,
Տեսնում ես չոքած ի՞նչպէս եմ լալիս...
—Դու խաբում ես ինձ, սուտլիկ, խաբեբայ.
Չե՞ս սիրում ասիր. էն ինչ է հապա,
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ինք մըտնում՝
Հեկեկում ես դու գիշերուայ մըթնում.
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
«Սարօ Ջան, Սարօ, Սարօ» ես ասում...
Մօսի Ջան, Մօսի, գլխովդ շուռ գամ.
Ինձ մի՛ սպանիր, ինձ թող էս անգամ.
Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչիլ ես նըրան երազում...
Ինձ մի՛ ըսպանիր, դամէդ տար հեռու...
Քու քո՞յրը չեմ ես... իմ Մօսին չես դո՞ւ...

XVI

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
Ախպէր տըղերքը էս դէպքի համար.

[2]) դերի.

Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
Կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար։
Անկոտրում Մոսին էլ ոչ Մոսին էր,
Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարքում,
Իրեն հարազատ քըրոջը տեսնէր
Նամարդ [1]) ընկերի—Սարօի գըրկում։
Գուցէ գիշերս էլ՝ իր հերսից ամ.քուն՝
Ուզում է ջահել քըրոջն ըսպանի,
Սարօի անունն ու սէրը թաքուն
Խանչալի ծայրով սըրտիցը հանի։
Ով գիտի, գուցէ հէնց այս գիշեր էլ
Իգիթ ոսխներն, անհաշտ ու յամառ,
Մէկմէկու հոտից ոչխար են ըշխել,
Մէկմէկից վըրէժ առնելու համար։
Կարող է նոյնպէս պատահել յանկարծ,
Որ մէկի դէզը, արդիւնքը հընձի,
Գիշերւայ ժամին հըրով բըռընկած,
Երկնահաս բոցով աստղերը խանձի։

[1]) Տմարդի.

ՉՈՐՈՐԴ ԵՐԳ

XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նման
Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.
Քարոտ Թիկունքից Զաթինդաղ լեռան
Նոր է արևը պըռունգը հանում.
Գիւղում աղմուկով իրար են անցնում,
Կըտեր ծայրերին կանայք հաւաքած,
Տըղերքը դէզի քարափն են վազում
Հըրացանների կիսերից բըռնած։

XVIII

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վըրդոված տըղերանց միջին,
Մատը դէզի ձոր մեկնելով հանդարտ
Այսպէս նա պատմեց զօռ տալով չիբխին։
—Էս գիշեր, կէսը կըլնէր գիշերւայ,
Դեռ չէի կըպցրել աչքս տեղի մէջ.
Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղւայ,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ..։
Հա՛, հալալ կէսը կըլնէր գիշերւայ,
Շունը վերկացաւ էս կըռան վրայ.

Հէյ հէյ կանչեցի, ձէն տըւող չէլաւ.
Շունը գազազեց, շունը վեր կալաւ...
Հէյ գիտի, ասի ինքըս իմ միջում,
Ի՞նչ է մընացել առաջւան տըղից.
Քընում էի վաղ մենակ արխաջում [1]),
Մի ձէն լըսելիս վեր թըռչում տեղից...
Էն էի ասում, քընել չէի դեռ.
Կը լինէր դառը գիշերւան կէսը,
Երկու մարդկային սև կերպարանքներ
Շան առջև փախած՝ ցած իջան դէսը...
Էս որ լըսեցին, դէս ու դէն ցըրւած
Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
Ու մըտի [2]) տակին, ճամբիցը ծըռւած,
Երկու մարդու թարմ ոտնատեղ գըտան։

XIX

Ամբողջ մի ամիս խուժքը գինավառ
Սարերը ու ձորեր ոտնատակ տըւեց,
Զորան Սարօին գըտնելու համար,
Որ սարիցն իջաւ Անուշին փախցրեց։
Մի ամսից յետոյ տըղերքն եկան տուն,
Գովելով նըրա արարքը ճարպիկ.
—Հալալ է տըղին, այ իգիթութիւն,
Ահա թէ ինչպէս կը փախցնեն աղջիկ։
Մենակ Անուշի եղբայրը—Մօսին
Մընաց հանդերում. երգում կերաւ նա,

[1]) Հանդրան. անասունի հանգիստը։ [2]) Ձորի մուտքը։

Սէր որ էլ լինին՝ նըրանց միասին
Գըտնի՝ կատորի, սիրտը հովանայ։
Մնաց հանդերում։ Եւ ահա մի օր,
Քաղւոր կանանց մէջ, մըթան հետ, թաքուն,
Շորերը պատռած, տխուր, գլխակոր
Անուշը ձորից եկաւ հօրանց տուն։

XX

—Աղջի, Վարդիշաղ, թէ հոգիդ սիրես,
Մի գարիդ գըցիր, տես ինչ է ասում.
Աչքըս խաւարի, տեսիլք դառնում ես,—
Տեսիլք եմ տեսել գիշերս երազում։
Մի մութ ձորի մէջ, մի նեղ ձորի մէջ
Անբախտ Սարօի ոչխարը կանգնած,
Լեզու էր առել ու խաղ էր կանչում,
Ու խաղ էր կանչում ձէն ձէնի տըւած...
Մի գարիդ գըցիր, թէ որդով խընդաս,
Էս երազն իսկի ես լաւ չեմ փորձել.
Ողորմած Աստուած, Քու դուռը բանաս,
Քու ոտի հողն ենք—Դու ես ըստեղծել...
Անբան գառները մութ ձորի միջին
Խաղ էին կանչում ու ձէնով լալի,
Սարօի նանն էլ նըրանց առաջին
Աղլուխ էր առել ու պար էր գալի...
—Աղջի, Մանիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ, ահա, էնպէս դուրս եկաւ.
Էս չարն, էս բարին... Սարօն է էս էլ.

Տէ՛ս, ահա, Սարօն սև ճամբէն ընկաւ...
Աստուած խընայի ջահել—ջիւանին [1]),
Աստուած խընայի իր նաչար [2]) նանին...

XXI

Ու ման է գալի սարերը ընկած
Սարօն փախցրած եղջերուի նըման,
Օրհասն առաջին, գընդակն ետևից
Հանդերը դըժոխք, ընկերը դուշման։
Եւ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
Սարերից իջնում, խաւարն է պատում,
Նըրա բայաթին ողբում է տըխուր,
Ընկեր սարերին խօսում, դանդատւում։

«Բարձրը սարեր, ա՛յ սարե՛ր
Ձէն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձէն տըւէք,
Իմ դարդերի թայ [3]) սարե՛ր։

Որս եմ՝ բութէս [4]) ձեզ տրած,
Ձեր ձորերին, ձեզ տրած,
Կուզեմ կորչեմ անդիման,
Էս աշխարքից բէզարած [5])։

Կորչեմ բէզար դատարկուն,
Քար-սարէսար դատարկուն,

[1]) Երիտասարդ. [2]) խեղճ. [3]) հաւասար, չափ. [4]) ապաւէն, յոյս [5]) յոգնած։

Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար-քուն։

Ա՜խ կը մեռնեմ՝ ամա նա
Վա՛յ թէ յանկարծ իմանայ,
Ես ազատւեմ էս ցաւից,
Աչքը լալով նա մընայ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

XXII

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարևան,
Ու խօսք չեն գըտնում ասեն անարգած,
Տարած ետ բերած, անբախտ աղջկան։
Ատուած խընայեց՝ կոպիտ եղբայրը
Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,
Իսկ խոժոռադէմ ալևոր հայրը
Սկսաւ փըրփըրած թըքել, անիծել։
—Դուրս գընա, կորի, ա՛յ լիրը, անըզգամ,
Սև ու սուգ լինի թաղ ու պսակըդ.
Կորի՛, չերևաս աչքիս մէս անգամ,
Գետինը մըտնի երկար հասակըդ։
Տեսա՞ր, որ Նըբան ատում է Մօսին,
Չեն ուզում, տեսար, Նըբան հէրն ու մէրդ,
Դու քա՞նի գըլուխ ունիս քո ուսին,
Որ վեր ես կենում փախչում Նըբա հետ»։
Խոնըջած գիւղացիք կըտուրից իջան
Մեղմելու կոպիտ բարկութիւնը հօր,
Յայտնըւեց նոյնպէս գիւղի քահանան,
Մի պատկառելի հըսկայ ալևոր։

—Դուրս գընացէք, դո՛ւրս, գոչեց տէրտէրը,
Անուշը թողէք ուղիղն ինձ ասի,
Թողէք նա յայտնի իր միտքն ու սէրը,
Նըբանից յետոյ բանը կը պարզի։
Մի լար, իմ աղջիկ, ինձ խոստովանիր,
Սիրո՞ւմ ես Նըբան, քու կամքո՞վ փախար...
Եթէ սիրում ես՝ էլ դարդ մի անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...
—Ի՞նչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տես,
Որ դուրսը յանկարծ աղմըկեց էսպէս...
Ո՞վ է ըսպանել... Մօսի՞ն... ո՛ւմ... ո՛ւր...
—Անո՛ւշ, հէյ Անո՛ւշ... ջուր հասցրէ՛ք, ջո՛ւր...»

XXIII

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
Երկընքի ժրթնած ամպերից իջնէր.
Ինչպէս փոթորիկ սաստիկ սրընթաց,
Գիւղից սըլացան մի խումբ կըտրիճներ։
Ցաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թըռչում են, ասես ահից հալածւած,
Ու Նըբանց առջև ահռելի բացւում,
Թըշշում է ձորը արիւնով լըցւած։
Գիւղը դատարկւեց մի ակընթարթում,
Քարափի գըլխին կանգնած անհամբեր,
Լո՛ւռ, սըրտատըրոփ ականջ են դընում,
Նայում են նեբքև... ձայն չի գալի դեռ.
Դեբեղն է միայն անդընդում՝ յուզւած՝
Խըլաձայն ողբով սողում դէպի ցած։

XXIV

Ու մարդասպանը դուրս եկաւ ձորից,
Դէմքը այլայլած, քայլուածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխուած է բոլոր։
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սևակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տրուաւ սընին
Սև հրացանը, սև օձի նըման։
Պապանձուեց նոյնպէս ամբոխը մեխուած,
Ոչ ոք ծըպըտալ չի համարձակւում,
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝
Հարայ է կանչում, երեսը պոկում։
Մեռած չորանի պառաւ նանն է նա՝
Ցաւից խելագար բառաչում, լալիս.
Տարաբախտ ծընող, վազում է ահա,
Ձորիցն է տըխուր գոռոցը գալիս։

XXV

Սըգաւոր կանայք նորա եռևից
Հարայ կանչելով ձորը վազեցին,
Իրենց կորցրածն էլ յիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարուեցին։
Իգիթին վայել սըրտառուչ ողբով
Լաց ու կոծ արին ձէն ձէնի տըւած,
Տըղերքն էլ ըսթին, լուռ ու գլխակոր,

Մընացին ժոտիկ քարերին նըստած։
Ողբացին անշունչ դիակի վըրա
Անտէր մընացած ոչխարի մասին,
Անսիրտ անէծքով յիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ եարի մասին.
Եւ նըրա մասին, որ ընկերները
Հանգեր գընալիս Սարօ կը կանչեն,
Որ սարից փախած սոված շընները
Կըտերը պիտի ոռնան, կըլանչեն։
Ծանրը չոմբախը գըլուխը մեխած,
Օճորքում դըրած պիտի մըրոտի,
Երկայն խանչալը պատիցը կախած
Պատենում մընայ ու ժանգը պատի։
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գընալ առանց Սարօի,
Սև շորեր հագած կը նըստի տանը՝
Անցած օրերը միտը կը բերի։
Եւ ամեն մի խօսք, մի յիշողութիւն
Կըտրատուում էին սիրտը ծեր նանի,
Եւ ազաչում էր նա մեռած որդուն
Մի անգամ խօսի, աչքը բաց անի։
—Ընչի՞ չես խօսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արև, կեանք ու Ջան՝ որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
Թըշնամի որդի, դաւաճան որդի»...
Բայց չէին բացւում աչքերը փակուած,
Շուրթերը սառել, չորացել էին,
Նըրանց արանքից ատամները բաց,
Սիպտակ շարքերով երևում էին։
Եւ նա կատաղած՝ յանդուգն անէծքով
Ծառս [1]) եղաւ դուշման երկընքի դիմաց,

[1]) Բարձրանալ։

Եւ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,
Եւ լալիս էին ձէն ձէնի տրւած...
«Կարմիր արևից ընկար, Սարօ ջան,
Կանանչ տերևից ընկար, Սարօ ջան
Արևս հանգաւ, Սարօ ջան,
Գիշերն ընկաւ, Սարօ ջան...»
Գիշերը իջաւ, թանձրացաւ մութը
Եւ նըւազեցին ձայները տըրտում,
Յոգնեցին, հանգան... Ծերուկ Դեբեդը
Սըգում էր մենակ խաւար անդընդում։

Սըգւոր դեռը,
Ծեր Դեբեդը,
Դօշը քրքրած,
Զուրը փրփրած,
Բարոտ ափին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...

XXVI

Եւ մի քանի ընկեր տըղերք
Զորում, գետի եղերքին,
Փոս փորեցին ու սըրտաբեկ
Հողին տըւին հովի դին։
Ծառ ու ծաղիկ՝ սըւսըւալով
Բոյր խընկեցին դիւրեկան,
Ծեր Դեբեդն էլ ահեղ ձայնով
Երգեց վըսեմ շարական։
Ու տըղերքը տըխուր ու լուռ
Վերադարձան դէպի տուն,
Զորում թողած մի սև բըլուր
Մի գերեզման անանուն։

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

XXVII

Գարունը եկաւ, հաւքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Մի աղջիկ եկաւ, մի մենակ քաղւոր,
Գետի եղերքին շըրջում է մոլոր,
Շըրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս։

—Սիրուն աղջիկ, ինչ ես լալի
Էդպէս մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
Էս ձորերում ամեն օր։
Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կը դայ, մի քիչ կաց,
Թէ լալիս ես՝ եարդ ես ուզում,
Ա՜խ, նա գընաց, նա գընաց...
Արտասւելով, լալով էդպէս
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ իզուր հանգցընում ես
Զահել կըրակն աչքերիդ։
Ընբա անբախտ հողի վըրա
Պաղ ջուր ածա աղբիւրի,

Դու էլ գընա նոր սէր արա,
Էսպէս է կարգն աշխարհի։

—Շնորհակալ եմ, անցեր ախպէր,
Աստուած պահի քու եարին.
Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սէրը
Վայելեցէք անթառամ.
Ինձ արցունք է տըւել Տէրը,
Ես պիտի լամ, պիտի լամ...

Ու ման է գալիս,
Երգում ու լալիս։
Երգերը անկապ, երգերը տըխուր,
Արցունքի նման հոսում են իղուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ այն անմիտ տրտունջն է խօսում,
Թէ ինչպէս յանկարծ աշխարքը փոխուեց,
Ինչպէս դատարկուեց կեանքում ամէն բան,
Սարերը մնացին որբ ու անչոբան,
Թէ ինչպէս յանկարծ նա գընաց հեռու,
Էլ չի դառնալու, էլ չի դառնալու...

«Ետ դա՛ռ, ետ, իգի՛թ,
Ետ դառ, անիրա՛ւ,
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ
Ոչխարդ էն սարով

Շուռ տուր, տուն արի,
Փախիր գիշերով
Ու թաքուն արի...

Ա՛խ, էն կանանչ սարի լանջին
Ո՞վ է քընած էն տըղէն,
Վըրէն քաշած սև հավընջին,
Կուռը հանած էն տըղէն...
Ջա՛ն, իմ եարն է, ջանին մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,
Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մուշ, անուշ մըրափել։

Վա՛ր կաց, վա՛ր, իգի՛թ,
Վա՛ր կաց, անիրա՛ւ,
Ոչխարըդ ըներ կիթ,
Օրը ճաշ դառաւ...
Արի՛, ջա՛ն, արի՛,
Քու գալուն մեռնեմ,
Թուխ չորան, արի՛,
Կարօտը առնեմ..-

Տեսէ՛ք, տեսէ՛ք, դավ ու զուռնով
Ի՞նչ հարսնիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ, թոն ու ձիւնով
Ձի են խաղում, չափ տալի...
Աղջի՛, աղջի՛, մըտիկ արէ՛ք,
Էս ի՞նչ տեսիլք ես տեսայ.
Ով էր տեսել էսպէս հարսնիք—
Ոչ հարս ունեն, ոչ փեսայ...

Բերում են հրդէն,
Ամեն, մեր տան դէմ...
Վէր դրրէք, վրրէն
Հիւսերրս քանդեմ...
Ես էլ եմ գալիս,
Էդ ուր էք տանում...
Ինձ էլ թաղեցէք
Իր գերեզմանում...

Ա՜խ, չէ՜, ամեն, ասում են դա
Մի դիակ է լուռ, հոտած,
Արիւնը չոր դէմքի վրրա,
Աչքերն անթարթ, սիպտակած։
Նա սիրուն էր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս էր ցողոտ-շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի՛, ջան իգիթ,
Արի՛, անիրաւ,
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ։
Էլ մի՛ ուշացնի,
Ես շատ եմ կացել,
Էլ մի՛ լացացնի,
Ես շատ եմ լացել...

Տե՛ս, կը խրոովե՛մ,
Լաց կըլեմ ես էլ...

Ձեմ խօսիլ քեզ հետ...
Ձեմ սիրիլ քեզ էլ...»

XXVIII

Անլրեալի վրշվրշում է
Պղտոր ջուրը Դերեգի,
Ներրա ափին կանչում է
Մենակ շիրիմն իգիթի։
Նրա շուրջը հէգ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,
Ձայն է տալիս իր Սարօին
Ու պրտրտում ժողրուած։
Եւ հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջկայ,
Բայց իր սիրած տրղան երրէք
Ձկա՜ց, չկա՜ց, ու չկայ...
Վրշվրշում է գետը—վո՛ւշ, վո՛ւշ,
Ու յորձանք է տալիս յորդ,
Ու կանչում է՝ «Արի՛, Անո՛ւշ,
Արի՛, տանեմ եարիդ մօտ...»
—Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տուն արի...
Կանչում է մայրը վերեւից, կանչում.
Դուշման Դերեգն է պղտոր մրընչում։

Վուշ-վո՛ւշ Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրիկ,
Վո՛ւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վո՛ւշ, Սարօ, վուշ-վո՛ւշ իգիթ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

Հաժբարձման գիշեր, էն գիւթիչ գիշեր,
Կայ հրաշալի, երջանիկ վայրկեան.
Բացւում են ոսկի երկընքի դրռներ,
Ներքև պապանձում, լռում ամեն բան,
Եւ Աստուածային անհաս խորհրդով
Լցւում բովանդակ Նբրա սուրբ գրքով։

Այն վեհ վայրկենին չքնաղ գիշերի՝
Երկընքի անհուն, հեռու խորքերից,
Անմուրաղ մեռած սիրահարների
Աստղերը թռած իրար են գալիս,
Գալիս՝ կարօտով մի հեղ համբուրւում
Աշխարքից հեռու, լաղուր կամարում։

ՎԵՐՋ

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ընդհանուր վերնագրի տակ հետզհետէ լոյս են տեսնելու առանձին գրքոյկներով մեր բանաստեղծների լաւագոյն ստեղծագործութիւնները։ Արդէն հրատարակուած են

1. Յովհան. Թումանեանի	Սասունցի Դաւիթը	15	կ.
2. » »	Անուշ . .	15	»
3. » »	Լեգենդներ . .	15	»
4. Շանթի . .	Երգեր . .	15	»
5. » . .	Լեռան աղջիկը .	15	»

Տպագրւում է

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

պատկերազարդ սերիան

1. Ղազ. Աղայեանի.	*Գիւլնազ-տատի հէքիաթը, Այծատուր, Զանգի-Զրանգի, Մանուկ-Խան*
2. » »	*Անտառի մանուկը, Ասլան-Բալա, Եղեզնուհի*
3. Ժողովրդական.	*Ոսկի ձկնիկ*
4. »	*Գառնուկ-եղբայր, Աղուէսը, Գայլը, Արջն ու Զմռուխտ-զուշը.*

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, Товарищество „Ст. Лисициянъ и К°“. (Бебутовская у. 29) *և* Типографія „Гермесъ“ (Мадатовская ул. 15).

գրաբ 24

Ար 1գ
ցա 1

<< Ազգային գրադարան
NL0167474